

Բազմաբնակարան շենքերի մուտքագծերում ջրաչափական հանգույցների տեղադրում



Երկիր. Հայաստանի Հանրապետություն

Պատվիրատու Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ԾԻԳ ՊՀ


Ժամկետները. Մայիս – օգոստոս, 2004թ.

Ծառայության մոտավոր գինը

26.5 մլն դրամ

Տեխնիկական առաջադրանք

Ուսումնասիրություն «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ենթակայության տակ գտնվող ջրամատակարարման համակարգերից սպասարկվող 22 քաղաքների բազմաբնակարան շենքերի մուտքագծերի վրա ջրաչափական հանգույցների տեղադրման նպատակով: Առաջարկվող շենքերի ցուցակը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ համաձայնեցումից հետո, մշակել ջրաչափական հանգույցների նախագծային փաստաթղթերի լրիվ փաթեթը:



Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը

Մշակվել է Հայաստանի Հանրապետության մարզերում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման ոլորտում գտնվող 22 քաղաքների շուրջ 1800 բազմաբնակարան շենքերի մուտքագծերում ջրաչափական հանգույցների տեղադրման նախագիծ:

Համաձայն նախագծման տեխնիկական առաջադրանքի պայմանների նախագծման աշխատանքները իրականացվել են 2 փուլերով՝

I փուլով - այցերի արդյունքում ճշգրտվել են բոլոր շենքերի ցուցակները, պարզաբանվել շենքերի համար նախատեսվող ջրաչափական հանգույցների տեղադրման ձևերը՝ հորում թե նկուղում տարբերակները, պահանջվող աշխատանքային ծավալների ըստ բնույթի և այլն: Իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել են նախնական մասնագրեր, նախնական նախագիծ, որը ներկայացվել և համաձայնեցվել է Պատվիրատուի հետ:

II փուլով – նախագծվել են ընդհանուր առմամբ մոտ 1800 բազմաբնակարան շենքերի համար մոտ 2000 ջրաչափական հանգույցների նախագծային փաստաթղթեր՝ աշխատանքային գծագրեր և նախահաշիվներ:

Աշխատանքային նախագծով մշակվել են շինարարության իրականացման 5 փաթեթ:

Աշխատանքի նպատակն է.

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման ոլորտում գտնվող 22 քաղաքների բազմաբնակարան շենքերի մուտքագծերում ջրի հաշվառման կազմակերպում:

